

# Խաչատուր Աբովյան

## Պարապ վախտի խաղալիք

Էս գրքի ճամփի խրատը

Գնա՛, իմ խեղճ գիրք՝ գնա՛ մարդամեջ.
Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հեչ:
Անկաշդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,
Ինչ ասեն, խոսին, տա՛ր ու համբերի՛ր:
Ճամփորթի գլխին շատ փորձանք կգա:
Անձրև, ձին, կարկուտ՝ հազիր համեշա:
Դուման ու կայծակ, շոք, բուք ու կրակ
Ամեն տեղ կըլին, ամեն ժամանակ:
Էսպես բանիցը ով շուտ վախենա,
Ու ճամփի կիսիցն վեր կենա, եդ գա,
Ոչինչ չի շահվիլ, դարդակ կմնա:
Փորձանքից՝ մարդը՝ լավ չի՝ նեղանա:
Ի՞նչ ես դարդ անում, որ վրեդ խոսին,
Յա քեզ ծաղր անեն, յա աչքից քցեն:
Ամենի սրտին դուր գալ չի ըլիլ.
Ամենի խաթրը ո՞վ կարա առնիլ:
Աշխարքի բերանն ջվալի բերան:
Առակ է ասած՝ ո՞ւմ ասես քո բանն:
Հալբաթ մեկ օր էլ արև դուրս կգա,
Էն վախտն կիմանան, թե ուզածդ ի՞նչ ա:
Գնա՛, աստված քեզ բարի ճամփա տա,

Ում տուն էլ մտնիս, բարով տո՛ւր, գնա՛:
Մտքումդ պահի՛ր էն վաղի առակն,
Որ չանես քեզ էլ, ինձ էլ խայտառակ:
Որ մեկ ծեր մարդ իր ջահել որդու հետ
Դուս էկավ, գնաց, աշխարք տեսնի, եդ
Էլ իր տունը գա: Ինքն իշի նստեց,
Սնգսնգալով՝ նա որդին առաջ քցեց:
Ճամփորթի մեկը էս տեսավ, ասեց:
Ի՞նչպես հեր ա նա, որ որդուն թողել
Ոտով, լիտր ու կես՝ ինքն իշին բազմել:
Ասածը ծերը լսեց, վեր եկավ,
Որդուն նստացրեց, ինքն առաջ ընկավ:
Մեկն էլ էն կողմիցն՝ իր զուռնեն փչեց:
«Երկուսդ էլ նստիք, ի՞նչ բան ա էդ մեծ»:
Սրան էլ լսեց լողլող հալևորն.
Ոտներն ճոլոլակ էն մեծ միրքավորն:
Հեր ու որդի որ իշի վրա բազմած՝
Չմտան քաղաքն, էլ մարդ չի մնաց,
Որ մատով նրանց ցույց չի տա՝ հանկարծ:
Բեղ, միրուք՝ բոլորն լավ սղալելով,
Ծափ տվին քամակիցն, վրեն ծիծաղելով:
Խղճի որ ճարը կտրվեց, վեր էկավ,
Իշի ոտները կապեց, մեկ փեդ լավ
Միջովն անց կացրեց, մեկ տուտն իր ուսին
Մեկը իր որդու՝ դրեց քամակին:
Քար ու ձոր բերան, ու աչք բաց արին:
Ճարն որ կտրվեց, ի՞նչ պետք է աներ,
Սիրտը չտարավ աշխարքի բաներ:
Հազար ուշունց ու անեծք կարթալով,
Էշը վեր առավ, քցեց ջուրն՝ լալով:
Գետի դրաղին կանգնած՝ սուք արեց՝
«Լիս դառնա հոգիդ՝ ա՛յ իմ էշ»՝ ասեց:
«Ի՞նչ կըլեր, տանից չէինք դուրս էկել,

Ո՛չ ուրիշի լսել, ո՛չ մեր տունն քանդել:
Ինձ տեսնողը՝ թող՝ իր գլուխը լա,
Ուրըշի դնչին հեչ մտիկ չտա»:–
Ամենի խոսքին ականջ դնողը
Գլուխը կկորցնի, յա էլած ղուղը:
Ով լայաղ չանի, քեզ վերցնի, կարթա,
Թո՛ղ իր շնորքը պահի, մոտ չգա:
Քա՛ր ու չոլ ընկնիլ ի՞նչ մեկ մեծ բան ա,
Խոր խոր խոսալուցն ո՞վ ինչ կիմանա,
Խոսողին էլ՝ միշտ հասկացող պտի,
Թե չէ փուչ՝ քամին կառնի, կտանի: